ԱՌԱՋԱԲԱՆ

Ընթերցողի ուշադրությանը հանձնվող «Հայոց պատմության հարցեր»-ի VI ժողովածուն ամփոփում է 2005 թ. հունիսի 24-ից 26-ը Եղեգնաձորում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կազմակերպած «Միջնադարյան Հայաստանի պատմության հիմնահարցեր» գիտաժողովում կարդացված շուրջ երկու տասնյակ զեկուցումները: Գիտաժողովը նվիրված էր Մեսրոպ Մաշտոցի կողմից հայերեն գրերի ստեղծման 1600 ամյակին:

Ժողովածուն աչքի է ընկնում պատմագիտական թեմատիկայի բազմազանությամբ: Նրանում ընդգրկված են միջնադարյան Հայաստանի քաղաքակրթությանը նյութական ու հոգևոր մշակույթների, ինչպես նաև պատմությանը նվիրված գիտական ուսումնասիրությունների արդյունքները:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում պատմագրության, աղբյուրագիտության, տեղագրության, ազնվականության, հոգևոր դասին, եկեղեցիներին ու վանքերին, վիմագրության, արվեստին, երկրի քաղաքական պատմությանը նվիրված հոդվածները:

Ժողովածուում ընդգրկված նյութերի ժամանակագրական սահմանները նույնպես լայն են: Դրանք սկիզբ են առնում վաղ միջնադարից և հասնում մինչև նոր ժամանակները:

Ժողովածուում տեղ գտած հոդվածներից մի քանիսը թեև նվիրված են ավանդական թվացող հիմնահարցերի, սակայն դրանք քննարկվում են մեր պատմագրության զարգացման այսօրվա պահանջներին համապատասխան:

Ուսումնասիրությունների մյուս խումբն առանձնանում է նյութի նորությամբ, հարցադրումների ու դրանց լուծման ինքնատի-

պությամբ: Նորությունն են նաև այն հոդվածները, որոնցում յուծվում են առեղծվածային թվացող սակավաթիվ, բայց կարևոր հարցեր:

Տեղին է ասված, որ գրքերը մարդկանց նման ունեն իրենց ճակատագրերը: Սույն մատենաշարը ծնվեց իբրև Պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների հոդվածների ժողովածու, բայց ժամանակի ընթացքում այն հասունացավ, ձեռք բերեց նույնիսկ թեմատիկ ուղղվածություն և այսօր համախմբում է ոչ միայն Պատմության, այլև Հնագիտության ու ազգագրության ինստիտուտների, ինչպես նաև՝ Մատենադարանի և Երևանի պետական համալսարանի մասնագետներին: Հիրավի, գիտական համագործակցության ուսանելի օրինակ, որի կարևորությունը վեր է ամեն կասկածից:

«Հայոց պատմության հարցեր» ժողովածուն միաժամանակ «Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճեան» մատենաշարի IX գիրքն է: Սույն մատենաշարի գրքերը տպագրվում են ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում ԱՄՆ Հայ կրթական ու մշակութային միության Նյու-Յորքի մասնաճյուղի միջոցներով ինստիտուտի ձեռք բերած տպագրական սարքերով: